

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Գեորգ Մելիք-Կարապետեան. Գերմանական օգնութեան քն-
կերութիւնները Տանկա-Հայաստանի համար: Թիֆլիս 1901, 80. էջ
3—77 (գիւնն է 35 կոպ.):

Պարոն Գ. Մելիք-Կարապետեանի այս աշխատութիւնը մի ըն-
դարձակ ուսումնասիրութիւն է, որ մեզ ծանօթացնում է «Գերմա-
նական Օգնութեան Ընկերութիւնների» կազմակերպութեան, նոցա
գործունէութեան ցոյց տուած արդիւնքների և այդ ընկերութիւն-
ների դիտաւորութիւնների հետ: Հետազօտութեան առաջի մասում
յարգելի հեղինակը մանրամասն նկարագրում է Բերլինի „Deutscher
Hilfsbund für Armenien“ և Ֆրանկֆուրտի „Der deutsche Hilfsbund für
christliches Liebeswerk im Orient“ ընկերութիւնների օրինակելի կազ-
մակերպութիւնը: Այս երկու ընկերակցութիւնների եռանդուն պրո-
պագանդայի շնորհիւ 1895 թուի սեպտեմբերից մինչև 1899 թ.
գարունքը հայերի օգտին Գերմանիայում հաւաքուել է 1 միլիոն
800 հազար մարկ (830,000 ռուբլի): Գումարի մի մասը ծախսուել է
կոտորածների զոհերին անմիջական օգնութիւն հասցնելու համար,
իսկ միւս մասով զանազան տեղերում պահուում են 31 որբանոց,
2 արհեստանոց, 2 հիւանդանոց, 1 դեղատուն և 1 ապաստանարան:
Որբերի ընդհանուր թիւն է 1798: Հայ հասարակութեան համար
աւելի քան հետաքրքիր կըլինէր մանրամասն տեղեկութիւն ունե-
նալ որբանոցների ներքին կեանքի և իւրաքանչիւր որբանոցի ուս-
ման ծրագրի մասին, սակայն դժբախտաբար հեղինակը կարողացել է
ձեռք բերել միմիայն Բեռլինի աղջկանց որբանոցի դասացուցակը,
որից երևում է որ այդ որբանոցում հայոց լեզուին յատկացուած է
չորս դասարաններում միասին շաբաթական 15 ժամ, գերմաներէ-
նին՝ 16 ժամ, իսկ կրօնին (ի հարկէ բողոքական) 17 ժամ:

Պ. Մ.-կ. իւր հետազօտութեան երկրորդ բաժնում երկար
կանգ է առնում մի խիստ կարևոր խնդրի վրայ և Հիլֆսբունդի
պաշտօնական կամ այդ միութեան անդամների մասնաւոր գրու-
թիւնների վրայ հիմնուելով աշխատում է պարզել այն հարցը,
թէ արդեօք «Օգնութեան Ընկերութիւնները» այդ քրիստոնէական
և մարդասիրական գործում ղեկավարում են քաղաքական կամ
կրօնական որևէ նպատակներով: Մեր ազգային եկեղեցու համար
մանաւանդ մեծ կարևորութիւն ունի դժբախտ հայ որբիկների կրօ-

նական դաստիարակութեան խնդիրը, և մենք անհրաժեշտ ենք համարում մատնանիշ անել Հիլֆսբուլնդի գործիչների դաւանափոխութեան վերաբերեալ բացատրութիւնների վրայ: Դոկտ. Բայնոլդս, Վանայ որբանոցի ղեկավարը, իւր գրութիւններից մէկում ի միջի այլոց ասում է որ «Երեսխաները այնտեղ բոլորն էլ դաստիարակւում են աւետարանական հաւատի ոգւով»: 1897 թուին Ելզասեան կոմիտէի գործավարը, նոյն որբանոցի համար մի գերմանացի ուսուցիչ ուղարկելու մասին խօսելով գրում է. «... այսպիսով գուցէ կարելի կը լինի հիմք դնել Ելզասեան առաքելութեանը Երևելքում»: Պրանկֆուրտի կետրոնը 1896 թուի նոյեմբերի 13-ին հրատարակում է մի կոչ (Ausruf), որի մէջ շեշտուած է և այն, որ «Պոմիտէի գործունէութիւնը ոչ թէ հակադաւանական է լինելու, այլ աւետարանական (?)»: Պէտք է ի նկատի ունենալ, որ Բերլինի կենտրոնը համեմատաբար այնքան էլ կրօնամոլ չէ, և այս ընկերակցութեան գործիչները բողոքական եկեղեցու դիտաւորութիւնների մասին ծածկա-Հայաստանում իրանց կարծիքները պարզ և որոշ ձևով չեն արտայայտել, «Reichsbote» լրագրում (1899, № 89) մի յօդուածագիր Հիլֆսբուլնդի Բերլինի Ծիւղի կողմից (Dr. Rohrbach կամ պր. Zeller, պր. Մ.-Վ.-ի գլբից պարզ չէ, թէ սոցանից որը) գրում է հետեւեալը Հիլֆսբուլնդի կրօնական նպատակների մասին. «Բացարձակապէս սխալ է հաւատացնել, թէ աւետարանական Օգնութեան Միութիւնը ցանկանում է դաւանափոխութիւն քարոզել: Մեմ հոստաւս վիսեմ (ստորագծումը մերն է) որ դա ճիշտ չէ, Հիլֆսբուլնդը ձգտում է միայն գլխաւոր գործերով և Աւետարանի քարոզումով զարթեցնել հայ լուսաւորչական եկեղեցում, որը խեղդուել է արտաքին ծեսերի մէջ, աւելի բարոյական-քրիստոնէական ու ոգեկան կեանք»:

Պր. Մելիք-Պարագեօղեան, բացի վերոյիշեալ բացատրութիւններից, քննելով նաև ուրիշ գրութիւններ դաւանափոխական հարցի մասին, եզրակացնում է որ Հիլֆսբուլնդի նպատակն է «այնպէս դաստիարակել հայ երեսխաներին, որպէս զի նոքա մեծանալով նկատեն իրենց մայր եկեղեցու պակասութիւնները և աշխատեն հեռացնել նոցա, գործելով այդ հարցում աւետարանական ուղղութեամբ (ստորագծումը մերն է)»: Յարգելի հեղինակը այդ ձգտումը բացատրում է այնպէս, իբր թէ «Հիլֆսբուլնդը ցանկանում է որ հայոց եկեղեցին վերանորոգուի հայերի միջոցով, և ոչ թէ քանդուի օտարների ձեռքով», և նա այս կէտում պատճառների գործունէութիւնը ոչ միայն անվտանգ է համարում, այլ նոյն իսկ ցանկալի: Սակայն բողոքական քարոզիչների զգոյշ և սիրալիր խօսքերը մի կողմ թողնենք: Միթէ մենք դեռ ևս չենք հասկացել որ մարդկանց հարկաւոր է չափել ի նկատի առնելով նոցա գործերը և ոչ թէ խօսքերը. մա-

նուանդ որ հաւատ որսալը այնպիսի մի պատուաւոր փէշակ չէ, որ հոգեւորականները քացարձակ և մոլեռանդ կերպով արտայայտեն իրանց դաւանափոխութիւն տարածելու միտումները, Իսկ Հիլֆս-բունդի վերաբերմամբ պարոն Մ. Կ. ի հաւաքած տեղեկութիւններից ակնյայտնի կերպով երևում է, որ այս հիմնարկութիւնը հայ որբերին կրթում է բողոքական եկեղեցու ոգւով և նոյն իսկ մտադրութիւն ունի մեր աղգային եկեղեցին խղճուկ որբերի միջնորդութեամբ աւետարանական սկզբունքներով վերանորոգելու: Ջարմանում ենք Հիլֆսբունդի այս դիտաւորութեան վրայ, Միթէ բողոքական պատերներին յայտնի չէ, որ Հայաստանեայց եկեղեցին ունի Աղգային ժողովներ, կաթողիկոսներ և կրօնական հարցերում հայ թշուառ որբիկներից աւելի հմուտ հոգեւորականներ, որոնք, եթէ կարիք լինի՝ կարող են իրանք վերանորոգել մեր աղգային եկեղեցին, մեր պապերի դաւանած սկզբունքները պահելով հանգերձ, եթէ «Օգնութեան Ընկերութիւնները» դաւանական խնդիրներում հանդուրժական են՝ նոքա որբերի հոգեւոր կրթութիւնը անմիջապէս պէտք է յանձնեն հայ լուսաւորչական եկեղեցականներին:

Պր. Մ. Կ. փորձում է նաև պարզաբանել, թէ արդեօք Հիլֆսբունդը որոշ դիտաւորութիւն չունի՞ Արևելքում Գերմանիայի քաղաքական և տնտեսական շահերին նպաստելու: Յարգելի հեղինակը թէև կասկածում է որ այս կաղմակերպութիւնը հիմնուած լինի յիշեալ նպատակներին ծառայելու միտումով, սակայն նոյն իսկ եթէ «Օգնութեան Միութեան» մէջ այդպիսի մի տենդենցիա առաջանայ՝ այդ ձգտումը հեղինակի կարծիքով օգտաւէտ կը լինի թէ գերմանացիների և թէ հայութեան շահերի համար Տաճկա-Հայաստանում: Մեզ թւում է թէ այս խնդիրը դեռ կարօտ է լուրջ ուսումնասիրութեան և խորհրդածութեան: Միմիայն այսքանը կարելի է ասել, որ մինչև այժմ տաճկահայերը թէ գերմանական քաղաքականութիւնից և թէ որոշ հայ գործիչների հակումներից դէպի եւրոպական այս կամ այն պետութիւնը միմիայն վնասներ են տեսել: Տաճկաստանի հայաբնակ նահանգների վերաբերմամբ վերջին և աղգեցիկ խօսքը անպայման միշտ Ռուսաստանին է, որը նոյն իսկ իւր քաղաքական շահերի տեսակէտից պէտք է զօրեղ կերպով պաշտպանէ մեր թշուառ տաճկահայ եղբայրների արգար դատը պանիսլամական այն փտանգաւոր քաղաքականութեան դէմ, որի սրամիտ և խորամանկ նպատակն է Ռուսաստանի սահմանակից երկիրը լցնել կրօնամոլ, վայրագն և կատաղի աւաղակների խմբերով, որոնք կը ծառայեն իբրև հաստատուն մի պատնէշ Ռուսաստանի հետ սպասելիք պատերազմներում: Ի հարկէ՝ եթէ բախտաւոր զուգահիւսութեամբ Գերմանիայի կամ մի ուրիշ որևէ եւրոպական պե-

տութեան տնտեսական կամ կուլտուրական գործունէութիւնը Փոքր Ասիայում շահաւէտ լինի քրիստոնէայ ազգարնակութեանը՝ այդ մի խիստ ցանկալի և ուրախալի միութարանք կը լինի տաճկահայերի համար: սակայն քաղաքական տեսակէտից տաճկահպատակ հայերի տղբալի գրութիւնը թեթեացնելու համար ամենամեծ արժէքը կունենայ Ռուսաստանի բարեկամութիւնը և պաշտպանութիւնը:

Պր. Մելիք-Աարազեօղեան զուր տեղը շեշտում է գլխաւորապէս Հիլֆսրունդի մարդասիրական, քրիստոնէական և իդէալական սքանչելի յատկութիւնները: Իրաւ որ Գերմանիայում կան շատ բարեսիրտ անհատներ, որոնք կոտորածների և աղէտների թշուառ զոհերի վերաբերմամբ տոգորուած են այդ տեսակ զգացմունքներով, սակայն «Օգնութեան Միութիւնը» իբրև դործող ամբողջութիւն բնականաբար խիստ լուրջ ցանկութիւն ունի իւր գործունէութիւնը Արևելքում յարմարեցնելու Գերմանիայի տնտեսական և քաղաքական շահերին: Իբրև ապացոյց կարող ենք մէջ բերել նոյն այս գրքից Յելլերի մի հետաքրքիր յօդուածը, ուր ի միջի այլոց ասուած է, որ «(Օգնութեան Միութիւնը) ամենեին անտարբեր չէ դէպի Գերմանիայի տնտեսական և քաղաքական շահերի յաջողութիւնը ընդհակառակը նա դիմել է մի անգամ, այդ կառավարութեանը, խնդրելով ցոյց տալ նորան այն ճանապարհը, որով պիտի նա շարունակէ ընթանալ, ներդաշնակելով իւր քայլերը իշխանութեան ցանկութեան հետ» („Das Reich Christi“, Juni, 1899):

Մեր վերոյիշեալ կարծիքները գերմանական բողոքական եկեղեցւոյ միտումաւոր գործունէութեան մասին բնաւ չեն արգելում երախտապարտ լինելու գերմանացիներին այն բանի համար, որ նոքա հաղարաւոր որբեր և տառապեալներ աղատեցին մահուան ճանկերից:

Խիստ ամոսոսում ենք, որ պր. Մ. Ա.-ի այս բարեխիղճ հետազօտութեան լեզուն զգալի թերութիւններ ունի:

Յակոբ Մանանդեան

«Էմիլնեան Ազգագրական Ժողովածու» հրատ. Լազարեան ձեմարանի. Հասոբ Բ. Ժողովրդական վեպ եւ հեքեաթ, հաւաքեց Ս. Հայկունի: Մոսկուա-Վաղարշապատ, 1901, 80, էջ III—X, 3—447 (գիմն է 1 ռուբլի 25 կոպ.):

Ներկայ գիրքը «Էմիլնեան Ազգագրական Ժողովածուի» երկրորդ հատորն է կազմում: Պր. Ս. Հայկունի Ժողովրդական բանահիւսութեան վերաբերեալ անսպառ նիւթեր ունի հաւաքած: Ժողովածուի